

ոչ միայն անհնարին եղաւ տարեկան 100 թումանը հանգանակել, այլ եւ նոր պահանջներ ծագեցան յիշեալ չորս «ղուլերու» պիտոյքը գոհացնելու համար: «Այս եղեւ բեռն ծանր եւ լուծ տաժանելի եւ անուր անխղելի ի վերայ սրբոյ Աթոռոյն Էջմիածնի ի գուր եւ ի տարապարտուց. եւ ամենայն ազին Հայկայ սուգ անմխիթար եւ տրտմութիւն անփարատելի՝ եկեղեցականաց եւ աշխարհականաց» կը գրէ Դաւրիժեցի (221/22):

Կաթողիկոսին սովորական հասոյթները բաւական չէին ծածկելու համար իր անձին, չրջակայ եպիսկոպոսներու եւ զուլերու ծախքերը, թող թէ վճարելու արքունի 100 թուման տուրքը: Պարտքերը բարդուեցան: Հաւատացեալները «սրտով լքին զկաթողիկոսն եւ զիւրսն եւ ի բաց կացին ի նոցունց»¹⁴: Ընչուած պարտքերէն՝ ձեռք առաւ Մելքիսեդբոնական միջոցներ. 1. «զարս անպարտս, եթէ եպիսկոպոս լինէր, եթէ արեղայ, եթէ երէց, եթէ աշխարհական կալեալ զնոսա... պահանջէր դրամ եւ մատնէր ի ձեռս զինուորաց զուլերոյն, որք կախեալ յոտիցն եւ բրածեծ առնէին, մինչեւ ըստ կամաց իւրեանց առնուին դրամս եւ ապա արձակէին». 2. կաշառքով կը ձեռնադրէր եպիսկոպոս կամ քահանայ. կամ մէկ վանքին սեպհական հոգը կը

¹⁴ «Ամենայն երկրին ատելի եղեւ եւ արկին յերեսաց եւ մէկ պատառ հացի տալոյ արժանի ոչ համարեցաւ». Գր. Դարանաղցի, էջ 297: